




ՀԱՅԲԱՐԱԲԵՐԹ

ՄԲ ՁԱԳԱՄՆԹ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԲԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՀԱՍՏՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ



1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագինն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի զաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիւնելու համար՝ Չորս (4) ֆրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: —

Մեկ թիւը՝ մեկ դանդիկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եւրոպ օրերը:

3. Խմբագրութիւնն պատրաստուելու չի անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դիմում ո՛ր եւ է յօդուած:

4. Ստորագրելու յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նախկ եւ յօդուածներ կը դիմուին ուղղակի խմբագրութեան:

6. Զեւագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:




ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԾՆԱԿԱՆ ՊԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ



Առաջին Տարի

8 Յուլիս 1911

Թիւ 3.

ԱՊՕՐԻՆԻ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԷ

« Որ ձեզ լսէ, ինձ լսէ. որ զձեզ անարգէ՝
« զիս անարգէ, և որ զիս անարգէ, զառաքելքն
« իմ անարգէ » (Ղուկ. Ժ. 16.) :

Մեանուաի Ախպար՝ որ խղճմտած էր Ամեն. Հոգեւոր Տիրոջ Հովուա-
կան թուղթը հրատարակելու, իր 4882 թուոյն մէջ կը հրատարակէ Պոլսոյ
քանի մը անձանց ապօրինի և անարժան յայտարարութիւնը նոյն Հովուա-
կանին դէմ՝ գատապարտեալ ժողովոյ անուամբ, թէ և հովուականին պէս՝
այս ալ կ'ըսուի թէ շատ օրինակներով պիտի ցրուին գաւառներու մէջ թէ՛
հայ և թէ՛ տաճկերէն լեզուաւ: Ըստ Մեանուաի Հովուականը, որ կաթո-
ղիկէ վարդապետութեան զուտ բացատրութիւնն է և հրաւէր մը հնազան-
դութեան Եկեղեցւոյ, խռովութեան պատճառ կրնայ եղեր ըլլալ. իսկ այս

յայտարարութիւնը, որ կաթողիկէ վարդապետութեան զուտ հերքում մ'է և հրաւէր մը ապստամբութեան Հովուապետի և հետեւաբար Եկեղեցւոյ դէմ, բնուէ չի կրնար եղեր վրդովանքի տեղիք տալ ... Որքան միամտութիւն, որքան խաղաղասէր շրջահայեցութիւն, որքան կաթողիկէավայել խղճմտութիւն ...

Գոնք իրողութեան. եղած յայտարարութիւնը շատ յանդուգն է և անսրբարանալի կերպով ծոնը. այսուհանդերձ հիմ ունինք ենթադրելու թէ ամէն անոնք, որոնց անուամբ հրատարակուած է, թափանցած չեն անոր հակակաթողիկէ հոգւոյն: Ուստի հարկ է լոյս սփռել, անոր անհեղեղ կողմերէն գլխաւորներն նշաւակել կաթողիկէ խղճի անաչառ դատաստանին:

Թէ և գիտէինք որ կեղծիքը որքան փաթութուած ըլլար՝ կարելի չէր պարտկել ընդ միշտ, սակայն չէինք յուսար որ մշտնապէս շուտ երեսն փար: Հարկ է եղեր որ հարուածը վերքին հանդիպէր, որպէսզի վերջապէս ժայթքէր ասոր գաղտնի դաւնութիւնը: Այն, որ Աստուծոյ ընդունած իշխանութեան ու պաշտօնին հետեւանօք՝ պարտաւոր էր ի խղճէ իր զաւակաց հիւանդութիւնն խնամել ու բուժել ժամանակին, չէր կրնար անկտրելի մնալ մահացու վերքի մը աւերին առջև: Անգութ գթութիւն մը կ'ըլլար, դաւաճան հայրութիւն մը եթէ չցաւցնելու համար ձգէր որ վերքը զայրանար, եթէ անոր վտանգը քողարկէր, եթէ չուզէր վճռապէս դարմանել: Բուժիչ ձեռքը միշտ չի փայփայեր, ի հարկին վիրաբոյժ ալ է. զայրոյթը այդ յորերար ձեռքին դէմ, անիրաւ է. ընդզիկը անարժան, թշնամանալը սպօրինի:

Դժբախտաբար այս զայրոյթն, այս ընդվզումն, այս թշնամութիւնն է որ ողբալի յայտարարութեան մէջ կը խիթայ Ամեն. Թէրզեան Կ-Պօրքի փրկարար Հովուականին դէմ: Ասոր հեղինակներն, ինչպէս օր մը սպառայ Սինոդոսի վրայ բռնանալու խակ սպառնալեօք՝ իրենց ազգասէր կրօնասիրութեան քօղը պատռելին, այսպէս հիմայ կուգան Պաշտօնական (°) յայտարարութեամբ կրօնասէր ազգասիրութեան գիմակը վար առնելու՝ արդարացնելով Եկեղեցւոյ անվտանգութիւնը իրենց գործոյն, զգացմանց ու գիտմանց վրայ: Կը ցաւինք խորապէս եղածին վրայ, բայց կ'ուրախանանք միանգամայն որ այս անձինք փութով ձեռք զարկին ծայրայեղութեանց, որովհետեւ այսպէս կաթողիկիայ ժողովուրդը պիտի տեսնէ անոնց հակակաթողիկէ սկզբունքներն ու գիտումներն, և միւս կողմանէ պիտի գիտնայ գրեւատեղ իր Հովուապետին արթւուն և գերզգօն ուղիղութիւնը: Եղած յայ-

տարարութիւնը մէկ խօսքով տպացոյց մը ևս է թէ անհրաժեշտ պէտք կար Ամեն . Հոգեւոր Տիրոջ արմատական ու վճռակի կարգադրութեանց :

Հարկ չկայ մեծ հանճարի ըսածնիս հաւաստելու համար . կը բաւէ պարզ տեսութիւն մը յայտարարութեան վրայ :

Յայտարարութիւնը՝ բացէն ապստանագիր մ'է կարգաւոր իշխանութեան դէմ . որովհետեւ յայտնապէս կաթողիկոսական իշխանութեան և իրաւասութեան դէմ առնելի բարձր իրաւասութիւն մը և իշխանութիւն մը կը կանգնէ , հակաթու մը (աշխարհականաց)՝ Եկեղեցական Կաթողիկոսական Աթոռոյն դէմ՝ երբ կ'ըսէ « որ Թեոգեան Կաթողիկոս Պատրիարք , ազգային երեսփոխանական ժողովին ընտրեալ ըզրարով , այժմ չուզեալ ճանցեալ այդ ժողովին ընտրողական իրաւունքը եւ փառացիին առին գործոց վրայ ունեցած քարձր իրաւասութիւնը » , ուր յայտնապէս կը քարոզուի սահման չունեցող քարձր իրաւասութիւն մը , որ առին գործոց կ'իշխէ . ահա իրենց հակաթուր . Կաթողիկոսը անդին « կը հաւատարմակի ինկզիմին իրաւասութիւն սալ Ազգը օժտելու նոր կանոնագրով մը , իրաւասութիւն՝ որ չենք հասկնար ուսկից կ'ստեն » . — ահա Աթուր՝ իրենց մաքով : — Թանկազին խոտովանութիւններ , որոնք կը մերկացնեն կեղծաւորութիւնն ու ծպտանքը և մերկապարանոց առջևնիս կը դնեն թէ ազգային իրաւունք , ազգային կանոնագիր , ազգային ժողով ինչ՝ կը նշանակին այս անձանց բերնին մէջ :

Հովուական իշխանութեան ամենանուիրական և ի պաշտօնէ գործն եկեղեցւոյ մէջ՝ է ուսուցանել զժողովուրդն բանիւ կամ գրով : Բանիւ եղածն է քարոզութիւն , որ իւրաքանչիւր թեմի կարգաւոր Եպիսկոպոսին կը պատկանի՝ սակայն կրնայ յանձնարարուիլ և կը յանձնարարուի առ հասարակ քահանայից , որոնք յանուն Եպիսկոպոսին է որ կրնան քարոզել և անկից ստացած իշխանութեամբ . առոր համար է որ առանց Եպիսկոպոսի հրամանին ոչ ոք կրնայ քարոզել և Եպիսկոպոսն իշխանութիւն ունի քարոզչութեան համար կարեւոր տեսած պայմաններն որոշել իր թեմին մէջ , զոր օր . կանխաւ քննութիւն , նիւթի որոշողութիւնն , և յն : Գրով եղածն է՝ Հովուական թուղթ կոնդակ և յն . այս ուսուցչութիւնն չի կրնար քահանայի ձգուիլ և ո՛չ մէկ թեմի Եպիսկոպոսն կրնայ ուրիշի թեմին մէջ ստանալ այդ իրաւասութիւնն : Իսկ ժողովրդեան գալով , սա ուսանող Եկեղեցին ներկայացնելով՝ պարտաւոր է ուսուցանող Եկեղեցւոյ ձայնը լսել և անոր հետեւիլ : Ինչ կ'ընէ երեսփոխանական ըստած ժողովոյ խմբակն . կաթողիկոսական և հովուական հանդիսաւոր և ի պաշտօնէ գործն դէմ կը դնէ իւր պաշտօնական () յայտարարութիւնը . անոր վարդապետութեան իր վարդա-

պետութիւնը, անոր իշխանութեան իւր բարձրագոյն (') իրաւասութիւնը ("), անոր ատեանին իւր վերնագոյն (") ատեանը (*), անոր աստուածատուր իրաւանց իւր ինքնատուր իրաւունքերն կը հակադրէ, կը մերժէ զհովուական, հետեւաբար հովուական իշխանութիւնը, որ վերջապէս Թէրզեանինը չէ, այլ Աստուծոյ որ ըսաւ. « Որ ձեզ շահ, ինձ շահ. որ զձեզ անարգեմ, զիս անարգեմ, զառաքիյն իմ անարգեմ » (Ղուկ. Ժ. 16) :

Զհասկցողներուն համար կը թարգմանենք. Ով որ (առանց բացառութեան) ձեզ (Առաքելացի և ձեր յաջորդներուն) մտիկ կ'ընէ, (կը հնազանդի, կը հպատակի), ինձ մտիկ ըրած կ'ըլլայ. ով որ ձեզ կ'անարգէ (մերժելով, ոտնակոխելով, խափանելով ձեր խօսքը, պաշտօնավարութիւնը, իրաւասութեան գործադրութիւնը), զիս կ'անարգէ. և ով որ զիս կ'անարգէ (ձեզ անարգելով), կ'անարգէ զիս զրկողն (իմ երկնաւոր Հայրս, զԱստուած) :

(Շարունակելի)

ԲՈՐԹՈՒԳԱԼԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՍՑ ԲՈՂՈՔԸ

Բորթուգալի մէջ կատարուած յեղափոխութիւնը պարզապէս քաղաքական սահմանի մէջ չմնաց: Արդէն յեղափոխականաց ծայր աստիճան ազանդաւոր և սնկրօն ըլլալը՝ գուշակել կուտար որ թագաւորն ու իր գերդաստանը վտարելով, սահմանադրական միապետութիւնը տապալելով և Հասարակապետութիւն հաստատելով զո՛հ պիտի չըլլային. այլ մեծամեծ ծայրայեղութիւններու պիտի հասնէին: Այդ բանը կ'ենթադրուէր, գո՛նէ ժամանակ մը վերջը: Բայց անոնք շատ աճապարեցին. ու կաթողիկէ կրօնքը ու կաթողիկէ Եկեղեցւոյ և Նուիրապետութեան դէմ այնպիսի օրէնք մը հրատարակեցին, որ բռնակալութեան ամենէն զարհուրելին է, ի նկատի առնելով մանաւանդ այն պարագան որ կաթողիկէութիւնը ամբողջ Բորթուգալի պետութեան բնակչութեան ընդհանուր կրօնքն է: Այդ անզգամ օրէնքը ամէն կրօնական ազատութիւն ոտնակոխ կ'ընէ. անով ամէն սրբութիւն կ'ուրացուի և կը նախատուի: Եկեղեցին Պետութենէն րաժնելով չեն գահանար. կրօնքը կ'ուզեն ջնջել: Այսքան ահաւոր չափազանցութիւնը ցնցեց ամենուն միտքերն, մեղքն իսկ Հասարակապետական դրութեան գաղափարակիցները ուժացուց. գլրդեց երկիրն ծայրէ ի ծայր և հակայեղափո-

խութեան ընդհանուր երկիւղ մը յառաջ բերաւ: Բնականաբար Նուիրապետութիւնը չէր կրնար լուռ կենալ այսքան հրէշաւոր և անհեղեղ սրբապղծութիւն մը առջև: Այս անիրաւ հալածանաց բաւական ժամանակ համաբերելէ վերջ, Բորթուկալի Արհիապ. Եպիսկոպոսները միասիրտ և միաբան խօսեցան, բայց հզօրեղապէս. և իրենց այս խօսքն որ Կաթողիկէ Եկեղեցւոյ աննխազ սկզբունքներուն կատարելապէս համաձայն է և որ դարերու շրջանին մէջ ամբարշտութեան յարուցած փոթորիկներուն մէջ անոր միայն սեպհական և յատուկ եղած ու իր փառապասկը կազմած է, կորովի և հեղաձայն հնչեց Լուսիստանեան երկրին մէջ, ու պիտի արձագանգէ ամբողջ աշխարհ: Հետեւաբար այս գեղեցիկ նկարագրի և կրօնական անյեղլի սկզբունքներու թարգման հանդիսացող բողոքագրին քանի մը մասերը քաղելով, իբր կրօնական հուժկու արտայայտութիւն մը՝ կ'ուզենք արտատպել, նաև իբրև գողտրիկ նմոյշ մը՝ եկեղեցական իրաւունքներու և կանոնաց ղպատճառաբանեալ պաշտպանութեանը:

Բորթուկալի Եպիսկոպոսունք կ'ըսեն. « Հարուածն արձակուեցաւ Գուշակութեանն ստուգուեցաւ: ... Ստուգուեցաւ միայն. ո՛հ ո՛չ. մանաւանդ թէ ակնկալութիւնն իսկ շատ գերազանցեց: Ալէտը վախցուածէն շատ աւելի մեծ եղաւ: Կը վախցուէր խստութենէ, եկաւ անգթութիւնը. կը վախցուէր հպատակ ծառայութենէ, եկաւ բռնակալութիւնը. կը վախցուէր երաշխաւորութեան և իրաւունքներու նուազումէն, եկաւ անարգալից ըստորնութիւնը. կը վախցուէր նիւթական կարեւոր միջոցներու ծանր ու տաղտկալի պակասեցումէն, եկաւ գրաւումը. կը վախցուէր վերջապէս անիրաւութենէ, եկաւ անոր հետ նաև հեգնութիւնը:

Եւ պիտի կարենանք մենք լռել:

Պիտի ստիպուի՞նք արդեօք մինք՝ անձնատուր, համակամ և անզգայ, ծռել մեր գլուխը սուրին շանթարձակ հարուածին տակ. և լռելիայն հանդիսատես ըլլալ պատերազմի տարփողական հրատարակութեան և կռուոյ սկզբնաւորութեան, որոյ վախճանը — ինչպէս արդէն կը հաստատեն ու կը խոստանան — Կաթողիկէութեան հոգեվարքը պիտի ըլլայ մեր սիրելի Հայրենեաց մէջ:

Պիտի կարենա՞յ մէկն յաւակնիլ ըսելու թէ մենք ձայն ունինք՝ միայն եղելութիւնն ու գործը ծափահարելու և անոր հեղինակը ողջունելու: Պիտի ուզէ՞ արդեօք մէկը որ Բորթուկալի Եպիսկոպոսունք նմանին ցածոգի սուսերամարտներու՝ անոնց հետ գոչելով.

« Կեանք դու՝ Կեսար. մեռանելոցք զքեզ ողջունեն »: ...

Ո՛չ ոք իրաւունք ունի մեզմէ այս անարժանութիւնն սպասելու : Զմեղ իբր երկչոտ ամբաստանեցին , որովհետեւ յարգադիր եղած էինք : Հնար է թէ քիչ մը չափազանց յարգութիւն ըրինք . հիմա ժա՛մ է խօսելու օրինաւոր կորովով ու սուրբ ազատութեամբ , որոնք յոյժ կը պատշաճին մեր եպիսկոպոսական նկարագրին ու մեր բորթուգալցի քաղաքացիութեան :

Եղանք — ու չենք ստրջանար ու պիտի շարունակենք ըլլալ — յարգադիր՝ հանդէպ իշխանութեան և հնազանդ առ հաստատեալ վարչութիւն :

Պիտի շարունակենք այնպէս ըլլալու . բայց միայն ան պայմանաւ որ հնազանդութիւնը հաշտելի ըլլայ ան պարտականութիւններու հետ զորոնք մեր վրայ կը դնէ մեր սուրբ առաքելութիւնը , և այնպիսի եղանակաւ՝ որ յարգանքը մեր դիրքը լքանելու և մեր խիղճերուն մատնիչ ըլլալու աստիճան չնուստանայ : Ոյր վասն ո՛չ ոք զմեզ համարի խռովարար կամ յեղափոխական . կը բողոքենք մենք միայն : Մենք ապստամբութիւն չենք քարոզեր . անիրաւութիւններու դէմ ձայն կը վերցնենք . թշնամութիւններ չենք դրդուեր մինք . ինքը զինքնիս բռնութիւններէ կը պաշտպանենք : Զեն մղեր զմեզ (Աստուած վկայ է մեզ և պիտի ըլլայ դատաւոր) փանաքի կիրքեր կամ շահագիտութիւններ . չներշնչեր զմեզ վշտակիր փառասիրութիւն կամ կարեւիւր խոցուած ունայնամտութեւն . մենք կը խօսինք յանուն եկեղեցւոյ՝ զոր նուաստացուցին , և ի նպաստ կաթողիկէ խղճի՝ զոր թշնամանեցին :

Կառավարութեան առջև , ամբողջ Ազգին առջև ձայն կը բարձրացընենք խաղաղասէր՝ բայց զօրեղ և ազգու բողոքներով ընդդէմ ստրկութեան եկեղեցւոյ , որոյ ազատութիւնը մասնաւորապէս կը սիրէ Աստուած , զոր և կը հրամայէ մեզ պաշտպանել ամէն զոհողութեամբ :

Զէ՛ , վերջապէս , չէ՛ հաժուական մը որ կը գրենք , այլ բողոքագիր մըն է զոր կը խմբագրենք : Մեզի կ'երևի թէ ո՛չ ոք պիտի կարենայ ժըխտել մեզ դո՛նէ այս իրաւունքը . — այս ինքն այն իրաւունքը զոր ունին զոհերն՝ գանգատելու , ամբաստանեալք՝ զիրենք պաշտպանելու :

Ամբաստանեալք Շա՛տ աւելի . դատաւարացուցան կրօնքի ու կաթողիկէ եկեղեցւոյ պաշտօնեայք , դատաւարտուեցան առանց դատաստանի ու պատժուեցան առանց յանցանքի :

(Շարունակելի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Ամենասրբին Պօղոս Պետրոս ԺԳ. Թեոքեանի
Հռոմի գաղութարէն եւ հոն գտած ընդունելութիւնը

Ամեն. Հոգեւոր Տեառն ճանապարհորդութիւնն ու Գալուստն ի Հռովմ
մեր ամբողջ Հասարակութեան համար շահեկան միջադէպ մ'է, որուն պա-
րագաններն միախառնական ու պատուաբեր ըլլալով, արժանի է որ աւճա-
գանգն ի լուր մեր ազգին:

Մարտ 29 ին երեկոյեան դէմ հասաւ Նորին Սրբութիւնն կաթողիկէ-
ութեան Մայրաքաղաքը. փութացած էին դիմաւորելու ի կայարան Մոնս.
Ռոլլէրի Արևելեան ծխի քարտուղարն Ս. Ժ. տարածման Հաւատոյ. Մոնս.
Բացցին ի նոյն ժողովոյ հայ գործոց Գրագիրը. Ուրբանեան Վարժարանի
Մեծաւորը. Արևելեան Պատրիարքաց բոլոր գործակալներն. Պետրոս Գերպծ.
Գոյունեան Արքեպ. Բաղկեդոնի, Լեոնեան Հայ Վարժարանի Մեծաւորներն.
Միախառնաց Գործակալն ի Հռոմ. Օսմանեան Դեսպանատան կողմանէ եկած
էին Հիւպատոսն՝ Կալլեան, Քարտուղար մը եւ իմամը: Կայարանին հիւրա-
նոցը բացուեցաւ ի պատիւ Գերերջանիկ կաթողիկոսին որ պահ մը դադա-
րեցաւ հոն ողջունելով մի առ մի զինքն դիմաւորողներն: Անկից ետքը քանի
մը կառքերով ամենքն միասին ուղեւորեցան Լեոնեան վարժարանի բնակա-
րանը, ուր աշակերտք երաժշտութեան դասատուի այս առթիւ շարադրած
քառաձայն մի երգով բարի գալուստ մաղթեցին իրենց նորընտիր եւ սիրելի
Հայրապետին: Յարգ. Յ. Վ. Յօղունի կարգաց առանձին ոտանաւոր ու-
ղերձ մը, զոր հոս կը դնենք.

ՈՂՋՈՅՆ

Ողջոյն փառաց, հապօ՞ն սանունք Լեոնեան,
Ողջոյն սիրոյ թըրթռացուցէ՛ք բերկրածայն.
Ժա՛մ է ահա, ժամ ցանկալի, սիրավառ
Սիրտք հայասնունդ, գոչենք մի սիրտ մի բարբառ

Բարեա՛ւ եկար Հայրապետ .
Երջանկութիւն բերկրաւէտ
Մաղթենք յերկնից քեզ յաւէտ :

Զարթի՛ր հոգւոյս վայրիկ մ'անուշ ս'վ քընար ,
Սիրանըւազ զարթի՛ր , հընչէ՛ քաղցրալար .
Ոհ՛ ինչ տեսիլք , ինչ փառք նորեկ , հիասքանչ
Ո՞վ է վրսեմ Հօտապետն այն վեհալանջ
Որ սուրբ ուխտեր հայ զարմին
Բերէ ընծայ , ուխտ ջերմին
Առաքելոց սուրբ շիրմին :

Հայ հայրենեաց նա Հոգեւոր Տէրն արթուն ,
Կիլիկիոյ Տան Հովիւ ու Պետ բազմարդիւն .
Ի նա կըրկին ոգիք , անուանք սըրբանուէր՝
Յուպ հովուական , Կեփայեան վառ հաւատք , սէր
Տեսէ՛ք զուգուած ինչ սիրուն ,
Սիրտ Տարսնեան սուրբ փողոյն ,
Սիրտ անվեհեր , եռանդուն :

Բայց ո՛հ ինչո՛ւ այդ քըրտնաթոր վեհ ճակատ
Տեսնեմք ցաւոց կըքած քողով միգապատ ...
Այդ հայրական անուշ աչաց մէջ , աւաղ ,
Ինչո՛ւ տըխուր ցոլայ շեշտով իւր ծիծաղ .
Գարշապարն ալ ի կարմիր ,
Ինչ տեսարան տըխրալիր ,
Ներկըւած է վարդածիր :

Ահ՛ , դու վըկայ սեւ օրերու , դառն ողբոց
Ո՞վ հայր , անցած ցաւոց բովէն սըրտախոց
Ինչպէս նախնի Լուսաւորիչ Հայ ազգին ,
Վիրապին խոր՝ ազատ ցաւէն դառնագին ,
Նոյն հաւատքով վառուած դու
Գըլխուն կրօնից յուսատու
Կուգաս շիրմին այցելու :


Ինչ ուխտ, ո՛վ հայր, բերես ազգէս գրաւագիր .
Հայ երկիրն է, ո՛հ ինքնին ուխտ, ուխտ կարմիր .
Ուխտ իւր հողեր, արիւնով վարդ՝ սուրբ նախնեաց,
Կիլիկիոյ թարմ արեամբ ալ նոր կընքըւած :
Հայրենակցին շիրմին վրայ՝
Հայ հաւատոց ի վըկայ,
Դի՛ր զայն գըրաւ մըշտակայ :

Ո՛հ ի՞նչ տեսիլք Ուխտիդ փոխան, փա՛ռք վըսեմ,
Տեսնեմ ահա կըրկին ոգիք լուսաճեմ,
Նոյն սուրբ ոգիք, որ երբեմն մեծ Լևոնի,
Բացած թեւեր, կան քո վերե հովանի :
Ունիս կըրկին քեզ պաշտպան .
Բանակներ իսկ Ադդիզեան
Ըլլան պիտի ցիր ու ցան :

Ողջոյն փառաց և մենք որդիք Լևոնեան
Յաղթութեան սուրբ երգենք ողջոյն բերկրաձայն,
Ժա՛մ է ահա, ժամ ցանկալի, սիրավառ .
Սիրոք հայասնունդ, գոչենք միասիրտ, մի բարբառ .
Բարեաւ եկար Հայրապետ .
Երջանկութիւն բերկրաւէտ
Մաղթինք յերկնից քեզ յաւէտ :

Նորին Սրբութիւնը յայտնապէս յուզուած՝ շնորհակալութիւն յայտնեց
ներկայից, որոնք կրկին հաւաստելով նորին Ամենապատուութեան հանդէպ
իրենց սնեցած յարգութիւնն ու քաղցր տպաւորութիւնը՝ մեկնեցան :
Մէկ երկու օր հանգստանալէ վերջ սկսաւ իր այցելութիւնները :

(Շարունակելի)



Մեկնութիւն Աւետարանի

Հոս Մատթեոսի

Ուղղակի մեկնութեան ձեռնամուխ չեղած՝ երկու յօդուածով կը փափագինք սուղ ինչ նախարանել:

Ա. ԱԻԵՏՍՐԱՆ ԲԱՌԸ կը նշանակէ այն սրբազան գիրքը որ կը բերէ ԱԻԵՏԻՍ ամեն ազգերու, ամէն տեղ, ամէն ժամանակ, կենոց քարոզով կոչելու համար ի հաւատս. « Ո՛հ, որչափ գեղեցիկ են խաղաղութեան ու բարութեան աւետարանիչներուն ոտքերը » . (Ես. ԺԲ. 7. Հռ. Ժ. 12-17.): Այս աւետիսին համեմատութեամբ գրեթէ ոչինչ կը մնան աշխարհիս իմաստնոց ճառերը՝ հարստութիւն, իշխանութիւն ու փառք. ինչ որ երկբաւոր բարիք՝ ընդունայն է. միայն ձկնորսներուն պատմածն է ճշարիտ աւետիս, ոչ միայն որովհետեւ քարոզուած բարիքն հաստատուն և անանց են, այլ քանզի առանց մեր աշխատութեան շնորհուեցան, Աստուծոյ զիջողական սիրով. (Ս. Յովհ. Ոսկեբ.): Եւ այս աւետիսը՝ 1. Առիթ է ուրախութեան. (Մտթ. Գ. 23.) — 2. Քրիստոսի երկնառաք վարդապետութիւնն է. (Իդ. 14.) — 3. Ս. Հաւատոյ քարոզութիւնն է ընդ ամենայն աշխարհ. (Հռ. ա. 1. Գաղ. Բ. 2.) — 4. Աստուածորդւոյն Մարդեղութեան, կենաց, խօսքերուն ու գործքերուն և կենսատու մահուան պատմութիւնն է. (Մարկ. ա. 1.):

Իբրեւ վաւերական՝ Ս. Եկեղեցին ընդունած է միայն Չորս Աւետարան, Հոգւոյն Սրբոյ ներշնչմամբ գրուած: Ասոր կը վկայեն Հաղք Եկեղեցւոյ, Կանոնք Ժողովոց և Սահմանք: Եւ այս գիրքերն միշտ ամենասրբազան համարուեցան յեկեղեցւոյ, իրենց աստուածիկէն ծագման, երկնաւոր նիւթոյն և շնորհաբաշխ արդեանց վերաբերմամբ: Ասոնց առաջինն է Ս. Մատթեոսի Աւետարանն, գրուած ի Հրէաստան չուրջ ութ տարի վերջը Քրիստոսի Համբարձումէն՝ ասորախառն երբայեցեղէնով և իսկոյն թարգմանուած յունարէնի:

Բ. 1. Այս ցանկալի աւետիսը մեզի համար է՝ անկէ լաւագոյն կամ աւելի թանկագին մը չկրնար ըլլալ. Աստուածորդին մեր փրկութեան համար ծնած և մեռած. իր յաղթութեամբ մահը պարտեց. կոչեց զմեզ անթառամ փառքի և Աստուծոյ երանական տեսութեան: Չկայ այլ ևս երկիւղ կամ յուսահատութիւն. այլ քաղցր յոյս և սէր:

2. Սրբութեամբ և արդարութեամբ պէտք է պաշտենք զԱստուծոյ, (Ղուկ. ա. 73), այս Աւետիսին ի շնորհակալութիւն, որ մեզի գանձ է անկողնապետի (Մատթ. ԺԳ. 44). խոնարհ յարգանք ու անթերի հնազանդութեամբ Ս. Գրոց. մեկնելով զայն մինակ ըստ մտաց Ս. Եկեղեցւոյ. քանզի ըսած է Ս. Օգոստինոս. « Իսկ ես Աւետարանի չէի հաւատար, եթէ զիս չստիպէր Կաթողիկէ Եկեղեցւոյ հեղինակաւոր իշխանութիւնը »:

3. Պէտք է կարգանք ուշադրութեամբ և գործադրենք անոր պատուիրանները. քանզի Աստուծոյ խօսք է. « Երբ զանոնք կը կարդանք, զնոյնինքն զՔրիստոս կը լսենք » (Ս. Բարս.): « Որ ընթեռնուն՝ ի միտ առցէ » (Մտթ իդ. 13. — Հմմ. Եփ. Գ. 4. — Բ. Կոր. Գ. 6, և 13.):

4. Գիտնալու է որ Մատթեոս՝ որ և Ղևի, այն մաքսաւորն է որ կոչեցաւ յառաքելութիւն (Մտթ. Թ. 9. Մարկ. Բ. 14. Ղուկ. Ե. 27.) և Աւետարանիչ եղաւ՝ և առաջինը « Ասով կը տեսնուին Հոգւոյն Սրբոյ շնորհքները և իր մեծափաստակ առաքինութիւնը: Եւ իր Աւետարանը իր արուեստին նման շահեր առաջ բերաւ. պատժոց պատուութիւն, մեղաց քաւութիւն, սրբութիւն, մկրտութիւն, որդեգրութիւն, երկնքի ժառանգութիւն, Աստուծոյ Որդւոյն հետ ազգականութիւն. այս անզուգական աւե-

տիսը կուտայ ամենուն, թշնամիներու և ապերախտներու ու խաւարեալներու: Աստուած յերկրի և մարդիկ յերկինս. և ամէնքը իրարու կը խառնուին. հրեշտակները մարդոց բանակակից, ու մարդիկ հրեշտակաց հաղորդ: Պատերազմը դադրած, դէք հալածականք, մահ լուծեալ, դրախտ բացեալ » (Ոսկ.):

5. Եւ այս ամէնը « Գրուեցաւ, որպէս զի հաւատալ թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, և հաւատալով՝ անոր անուամբ ընդունիլ յաւիտենական կեանքը » (Յովհ. ի. 31.): Ասոր համար է որ այս Աւետիսը պիտի քարոզուի ամէն տեղ, ամէն ժամանակ, ամէն մարդոց, ամէն ազգաց « մինչև ի կատարած աշխարհի »: « որպէս զի իրենց աշակերտած խօսքերուն ճշմարտութիւնը ճանչնան »: « Յայտնի եղայ անոնց որ զիս չէին հարցներ » (Մատթ. իր. 20. — Ղուկ. ա. 4. — Հռ. Ժ. 18-20.):

6. Եւ Մատթէոս իր դրած ճշմարտութիւնը կնքեց իւր արեամբ, նահատակուելով անոր վրայ յէթեոյսպիա: Օրինակ տուաւ մեզ ճշմարտութեան վրայ մահուամբ չափ արիանալու:

7. Բայց և այնպէս Քրիստոսի ամէն գործն ու խօսք գրի չկրցաւ առնուիլ (Յովհ. իա. 25.) որոնք սակայն Ս. Աւանդութեան ու Եկեղեցւոյ Գանձուն մէջ պահուած կան, Եկեղեցւոյ որ պիտի ուսուցանէ աննիաղ. զի Քրիստոս ըսաւ՝ ոչ թէ գրեցէ՛ք, այլ « Ուսուցէ՛ք » (Մատթ. իր. 19-20.) և « Ով որ Եկեղեցւոյն չլսեր, ըլլայ քեզի իրեւ հեթանոս ու մաքսաւոր » (Մատթ. Ժր. 17.):

8. Պէտք է որ այս գրուածները խորհրդաւոր կերպով և Հոգւով որբով գրուին մեր սրտերուն մէջ, ինչպէս հին Նահապետաց եղաւ, որոնց ուղղակի խօսեցաւ Աստուած: Նոյնպէս Առաքելոց ալ ըսաւ. « Հագին պիտի յիշեցնէ ձեզ ամէն բան » (Յովհ. Ժգ. 26.), և Քրիստոնեայք թուղթեր են « Գրեալ ո՛չ մբով, այլ Հոգւովն Աստուծոյ » (Բ. Կոր. գ. 2-3. հմմ. երեմ. լա. 33-34): Նոր օրինաց արդիւնքն այս պէտք է ըլլայ. քանզի հին տրուեցաւ անհանձարներու և խտապարանոցներու, մարմնաւոր և հարկու տեսիլքներով իւր Մովսէս լեռն ելաւ. իսկ նորը տրուեցաւ մեզ շնորհօք և « մեծաւ մեղմական զգոնութեամբ « երբ մեր բնութիւնն ելաւ համբարձաւ յերկինս » (Ոսկ.):



ՅԱՆՑԱՊԱՐՏ ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկոսական վերջին Կանգակին գէմ եկեղեցիներու մէջ՝ առաջի Ս. Սեղանայ, քրիստոնէական հաւատքի անպատուարեր ցոյցեր և նոյն իսկ պաշտօնը կասարող ժողովրդապետաց վրայ յարձակումներ եղան, ազգասիրութեան զխմակին տակ կրօնքը, հոգեւոր իշխանութիւնը, եկեղեցիաց սրբութիւնը առ ոչինչ գրող կուսակցականներէ: Այս տեսակ սինքրոր, սպարիներ ու անխիղճ արարք չեն կրնար վարդապետական ու հովուապետական աստուածատուր իրաւասութիւնը բեկանել. « Դժոխոց գուռները պիտի

չկարենան զայն յաղթահարել »: Միայն իրենց հեղինակներուն ո՛րքան աշխարհային կրքով նուաւտացած ըլլալը, իրենց այսպիսի միջոցներով պաշտպանել յանդգնած դատին անիրաւութիւնը կ'ապացուցանեն: Բաց աստի, դիտել կուտանք նաեւ որ եղածները պարզապէս գրգռութեան արդիւնք են: Յայտնի կը տեսնուի որ երեսփոխան ըսուածներէն ոմանք այս խռովութիւնները տարօրէն համար կանխամտածուած պատրաստութիւն տեսած են ծանօթ Գրիշպի մէջ. ծրագիրը նախապէս որոշած են. իրենց ծանօթ — Դաշնակցական — գործիչները վազցուցեր, և իրենք ալ անձամբ տագին անդին վազելով ժողովուրդը գրգռելու փորձեր ըրեր են. եկեղեցեաց բակին մէջ խռովայոյզ ճառեր արտասանելու են՝ հերետիկոսական անպատկառութեամբ, մանաւանդ մէկը — առաջնորդ բանի —, իսկ միւսը՝ լրագրական ասպարէզէն, լի կրիւք և ի վրէժ անձնական՝ « զի հատու յոյս չահի »...: Երեսփոխան ըսուողները՝ թէեւ կամակից, գոնէ՛ իրենց կարծեցեալ պատիւը պահելու համար այսպիսի ռամկական ցոյցերէ հեռու կենալու էին. դժբախտաբար երկու տարիէ ի վեր հակառակը տեղի կ'ունենայ: Այս անգամ ալ եթէ ժողովուրդը իրեն ձգած ըլլային, նա բոլորովին հանդարտ պիտի մնար և յարգադիր իւր Հովուապետին անբռնարարելի հոգեւորական իրաւանց և իշխանութեան: Այս խռովարարները չեն խորհիր՝ արդեօք թէ որպիսի՞ տհեղ պատասխանատուութիւն կը ստանձնեն առաջի Աստուծոյ: Պէտք է գիտնան որ Հովիւը Աստուծմէ գրուած է. անոր իշխանութեան գործածութիւնը աստուածատուր է. իրաւունք ու ճմարտութիւն միշտ յաղթական են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապօրինի եւ անարժան յայտարարութիւն մը	էջ 23
Բորթուզաշի Եպիսկոպոսաց Բողոքը	» 26
Տեղեկագրական	» 29
Մեկնութիւն Աւետարանի ըստ Մատթեոսի	» 32
Յանգաւարս Ծայրացեղութիւններ	» 33